- համագործակցել ՀՀ-ում և արտերկրում գործող «ազգային փոքրամասնություններ» ուղղվածություն ունեցող կազմակերպությունների հետ.
- մասնակցել Հայաստանում ժողովրդավարական հասարակության զարգացման, ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման, իրավունքի գերակայության ամրապնդման, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետության բարձրացման գործընթացներին ՝ ի շահ Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման ու եզդի ժողովրդի մասնակցությունը այդ գործընթացներին.
- եզդի երիտասարդների շրջանում քաղաքացիական ակտիվության բարձրացում՝ հիմնվելով քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության սկզբունքների վրա՝ գործելով ազգային և միջազգային մակարդակներում.
- պաշտպանել եզդի ժողովրդի իրավունքները տարբեր ոլորտներում.
- եզդի ժողովրդի խոցելի խմբի/անչափահաս երեխաներ, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ, հաշմանդամներ, անապահով ընտանիքներ, զոհված ազատամարտիկների ընտանիքներ և այլն/ սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն աջակցություն.
- եզդիների աշխատանքի տեղավորմանն ուղղված գործունեության իրականացում.
- փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում.
- Գործնական կապերի հաստատում համանման գործունեություն իրականացնող այլ կազմակերպությունների հետ.
- կազմակերպության անդամների իրավունքների ու շահերի ներկայացում և պաշտպանություն պետական և ոչ պետական մարմիններում, հիմնարկներում և այլ կազմակերպություններում:

2.3 Կազմակերպությունն իրականացնում է նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ծրագրեր :

3 .ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ, ով ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը :

3.2Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետև՝ Խորհուրդ):

3.3Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Խորհուրդը:

3.4Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում Խորհրդի որոշմամբ:

3.5Կազմակերպության այն անդամը, որը Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, կամ պարբերաբար խախտում է սույն կանոնադրությունը, Խորհրդի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա/ ընտրել և ընտրվել Կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններում, ընդ որում, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում կարող է ընտրվել 18 տարին լրացած անձը.

բ/ Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ.

գ/ սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին.

դ/ ազատ դուրս գալ Կազմակերպությունից.

ե/ Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը.

զ/ մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին.

է/ Կազմակերպության նախագահի և Խորհրդի ոչ կանոնադրական գործունեության դեմ բողոքարկել ժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

4.2Կազմակերպության անդամը պարտավոր է՝